<<ԵՐԵՎԱՆԻ ՄԽԻԹԱՐ ՀԵՐԱՑՈՒ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ>> ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N <<ՄԱԾՁԲ-2020/3-ԵՊԲՀ-1>>

ք. Երևան <<17>> 12 2019 թ.

<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամը, ի դեմս ռեկտոր **Ա. Ա. Մուրադյանի**, որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և **<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ-ն**, ի դեմս գլխավոր տնօրեն **Վ. Գզրարյանի**, որը գործում է Կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը:

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը:

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին.

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է

Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1) և հանձնման-ընդունման արձանագրության **երկու** օրինակ (հավելված N 3):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **տասն** աշխատանքային օրվա ընթացքում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **5,962,600 (հինգ միլիոն ինը հարյուր վաթսուներկու հազար վեց հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ՝ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների դեպքում, մատուցված ծառայությունների դիմաց վճարումներին իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԾxՔ, որտեղ՝

ՎԳ-ն պայմանագրով սահմանված առանձին տեսակի ծառայությունների մատուցման դիմաց վճարվող գումարն է.

ՄԳ-ն ընտրված մասնակցի առաջարկած հանրագումարային գինն է.

ՆԳ-ն ծառայության մատուցման համար սահմանված առավելագույն միավոր գների հանրագումարն է.

Ծ-ն մատուցված ծառայության առավելագույն միավորի գինն է.

Ք-ն մատուցված ծառայության քանակն է:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում, սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի <<Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ>> բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **13 (տասներեք)** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Պայմանագրով նախատեսված ծառայությունների մատուցումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում, Կատարողը համաձայնագիրը կնքում և Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից տասնհինգ աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>	<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ	**<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ**
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2	**Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծ. Իսակովի 22**
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ	**Բանկ՝ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ**
Հ/Հ 11500166513800	**Հ/Հ 15700-03667300100**
ՀՎՀՀ 01503448	**ՀՎՀՀ 01557589**
	Էլ. փոստ՝ info@toyota.am
Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան	**Գլխավոր տնօրեն՝ Վ. Գզրարյան**
(ստորագրություն)	**(ստորագրությունը)**
Կ.Տ	**Կ.Տ**

Հավելված թիվ 1
<<17>>_____12_____20_19_թ. կնքված
<<ՄԱԾՁԲ-2020/3-ԵՊԲՀ-1>> ծածկագրով պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	50111130	Տոյոտա Քամրի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (1 հատ) (Հավելվածի բացվածքը կցվում է)	դրամ	1,824,750	1	Ծառայությունը մատուցվելու է պայմանագիր կնքած մասնակցի գործունեության հասցեում	Ծառայության մատուցումն իրականացվելու է 2020 թվականին, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի <<ը>> պարբերության պահանջները
2	50111130	Տոյոտա Կոռոլա ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (3 հատ) (Հավելվածի բացվածքը կցվում է)	դրամ	1,391,000	1	Ծառայությունը մատուցվելու է պայմանագիր կնքած մասնակցի գործունեության հասցեում	Ծառայության մատուցումն իրականացվելու է 2020 թվականին, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի <<ը>> պարբերության պահանջները
3	50111130	Տոյոտա Յարիս ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (1 հատ) (Հավելվածի բացվածքը կցվում է)	դրամ	1,285,150	1	Ծառայությունը մատուցվելու է պայմանագիր կնքած մասնակցի գործունեության հասցեում	Ծառայության մատուցումն իրականացվելու է 2020 թվականին, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող

							համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի <<ը>> պարբերության պահանջները
4	50111130	Տոյոտա Հայասի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (2 հատ) (Հավելվածի բացվածքը կցվում է)	դրամ	1,461,700	1	Ծառայությունը մատուցվելու է պայմանագիր կնքած մասնակցի գործունեության հասցեում	Ծառայության մատուցումն իրականացվելու է 2020 թվականին, համապատասխան ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած՝ պահպանելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման>> կարգի 21-րդ կետի 1-ին ենթակետի <<ը>> պարբերության պահանջները

** Ծառայության մատուցման վերջնաժամկետը չի կարող ավել լինել, քան տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:*

*** Եթե պայմանագիրը կնքվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սյունակում ժամկետի հաշվարկն իրականացվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի ուժի մեջ մտնելու օրվանից սկսած:*

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծ. Իսակովի 22
Բանկ՝ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100
ՀՎՀՀ 01557589
Էլ. փոստ՝ info@toyota.am

Գլխավոր տնօրեն՝ Վ. Գզարյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Չափաբաժին թիվ 1՝ Տոյոտա Քամրի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (2.5 GAS, 1 հատ)

Հ/հ	Ծառայությունների և աշխատանքների անվանումները	Ծառայության և աշխատանքի միավորի գինը, ՀՀ դրամ
1	2	3
1	Շարժիչի յուղի փոխարինում, շարժիչի տարողությունը 4.7 լիտր (7000 կմ-ը մեկ)	25,850
2	Շարժիչի յուղի զտիչի փոխարինում (7000 կմ-ը մեկ)	5,400
3	Առջևի արգելակման կոճղակի փոխարինում (15000-20000 կմ-ը մեկ)	45,000
4	Հետևի արգելակման կոճղակի փոխարինում (30000-35000 կմ-ը մեկ)	35,000
5	Օդի զտիչի փոխարինում (14000 կմ-ը մեկ)	13,000
6	Սրահի զտիչի փոխարինում (20000 կմ-ը մեկ)	15,000
7	Վառելիքի զտիչի փոխարինում (40000 կմ-ը մեկ)	41,000
8	Շարժիչի հովացման հեղուկի փոխարինում (120000-150000 կմ-ը մեկ)	75,000
9	Վառոցքի մոմերի փոխարինում, 4 հատ (70000-80000 կմ-ը մեկ)	39,000
10	ԱՖՏ-ի յուղի, զտիչի, միջադիրի փոխարինում (80000 կմ-ը մեկ)	86,000
11	Գեներատորի փոկի փոխարինում (80000-90000 կմ-ը մեկ)	38,000
12	Անվաբացքի կարգաբերման աշխատանքներ	13,000
13	Անվադողերի փոխարինման և հավասարակշռման աշխատանքներ	12,000
14	Ինժեկտորային համակարգի մաքրող հեղուկ (20000 կմ-ը մեկ)	7,000
15	Արգելակման հեղուկի փոխարինում (40000 կմ-ը մեկ)	24,000
16	Առջևի արգելակման սկավառակների փոխարինում (50000 կմ-ը մեկ)	143,000
17	Հետևի արգելակման սկավառակների փոխարինում (50000 կմ-ը մեկ)	135,000
18	Ապակեմաքրիչի 2 ռետինների փոխարինում	23,000
19	Ապակեմաքրիչի չսառչող հեղուկի փոխարինում, 1 լիտր	1,500
20	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	15,000
21	Հետևի կայունարարի վռանների փոխարինում	13,000
22	Առջևի կայունարարի կանգնակների փոխարինում, 2 հատ	57,000
23	Հետևի կայունարարաի կանգնակների փոխարինում, 2 հատ	83,000
24	Առջևի հարվածամեղմիչների փոխարինում, 2 հատ	182,000
25	Հետևի հարվածամեղմիչների փոխարինում, 2 հատ	188,000
26	Առջևի անվակունդի փոխարինում, 1 հատ	61,000
27	Հետևի անվակունդի փոխարինում, 1 հատ	245,000
28	Առջևի հարվածամեղմիչի թասակի փոխարինում, 1 հատ	66,000
29	Հետևի հարվածամեղմիչի թասակի փոխարինում, 1 հատ	78,000
30	Մարտկոցի փոխարինում	60,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1,824,750**

Ցանկացած մասի կամ հանգուցի համար Կատարողը Պատվիրատուին երաշխավորում է վերանորոգման դեպքում՝ առնվազն 3 ամիս, իսկ փոխարինման դեպքում՝ առնվազն 6 ամիս: Ծառայության արժեքի մեջ ներառված են փոխարինվող պահեստամասերի, նյութերի գները: Փոխարինվող պահեստամասերը և օգտագործվող նյութերը օգտագործված չեն և տրանսպորտային միջոցի արտադրողի կողմից արտոնագրված: Պատվիրատուն ցանկացած պահի իրավունք ունի Կատարողից պահանջել տեխնիկական սպասարկման ընթացքում օգտագործված նյութերի և պահեստամասերի որակի փաստաթղթերը:

Մեքենայի շարժիչի վերանորոգման աշխատանքները իրականացվում են առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մնացած աշխատանքները՝ առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծ. Իսակովի 22
Բանկ՝ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100
ՀՎՀՀ 01557589
Էլ. փոստ՝ info@toyota.am

Գլխավոր տնօրեն՝ Վ. Գզրարյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Չափաբաժին թիվ 2՝ Տոյոտա Կոռոլա ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (1.6 GAS, 3 հատ)

Հ/հ	Ծառայությունների և աշխատանքների անվանումները	Ծառայության և աշխատանքի միավորի գինը, ՀՀ դրամ
1	2	3
1	Շարժիչի յուղի փոխարինում, շարժիչի տարողությունը 4.2 լիտր (7000 կմ-ը մեկ)	23,100
2	Շարժիչի յուղի զտիչի փոխարինում (7000 կմ-ը մեկ)	5,400
3	Առջևի արգելակման կոճղակի փոխարինում (15000-20000 կմ-ը մեկ)	36,000
4	Հետևի արգելակման կոճղակի փոխարինում (30000-35000 կմ-ը մեկ)	31,000
5	Օդի զտիչի փոխարինում (14000 կմ-ը մեկ)	8,000
6	Սրահի զտիչի փոխարինում (20000 կմ-ը մեկ)	15,000
7	Վառելիքի զտիչի փոխարինում (40000 կմ-ը մեկ)	65,000
8	Շարժիչի հովացման հեղուկի փոխարինում (120000-150000 կմ-ը մեկ)	40,000
9	Վառոցքի մոմերի փոխարինում, 4 հատ (70000-80000 կմ-ը մեկ)	33,000
10	ԱՖՏ-ի յուղի փոխարինում (80000 կմ-ը մեկ)	40,000
11	Գեներատորի փոկի փոխարինում (80000-90000 կմ-ը մեկ)	42,000
12	Անվաբացքի կարգաբերման աշխատանքներ	13,000
13	Անվադողերի փոխարինման և հավասարակշռման աշխատանքներ	12,000
14	Ինժեկտորային համակարգի մաքրող հեղուկի փոխարինում (20000 կմ-ը մեկ)	7,000
15	Արգելակման հեղուկի փոխարինում (40000 կմ-ը մեկ)	24,000
16	Առջևի արգելակման սկավառակների փոխարինում (50000 կմ-ը մեկ)	149,000
17	Հետևի արգելակման սկավառակների փոխարինում (50000 կմ-ը մեկ)	145,000
18	Ապակեմաքրիչի 2 ռետինների փոխարինում	18,000
19	Ապակեմաքրիչի չսառչող հեղուկի փոխարինում, 1 լիտր	1,500
20	Կայունարարի վռանների փոխարինում, 2 հատ	29,000
21	Կայունարար կանգնակների փոխարինում, 2 հատ	51,000
22	Առջևի հարվածամեղմիչների փոխարինում, 2 հատ	136,000
23	Հետևի հարվածամեղմիչների փոխարինում, 2 հատ	96,000
24	Առջևի անվակունդի փոխարինում, 1 հատ	123,000
25	Հետևի անվակունդի փոխարինում, 1 հատ	140,000
26	Հարվածամեղմիչի թասակի փոխարինում, 1 հատ	58,000
27	Մարտկոցի փոխարինում	50,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1,391,000**

Ցանկացած մասի կամ հանգույցի համար Կատարողը Պատվիրատուին երաշխավորում է վերանորոգման դեպքում՝ առնվազն 3 ամիս, իսկ փոխարինման դեպքում՝ առնվազն 6 ամիս: Ծառայության արժեքի մեջ ներառված են փոխարինվող պահեստամասերի, նյութերի գները: Փոխարինվող պահեստամասերը և օգտագործվող նյութերը օգտագործված չեն և տրանսպորտային միջոցի արտադրողի կողմից արտոնագրված: Պատվիրատուն ցանկացած պահի իրավունք ունի Կատարողից պահանջել տեխնիկական սպասարկման ընթացքում օգտագործված նյութերի և պահեստամասերի որակի փաստաթղթերը:

Մեքենայի շարժիչի վերանորոգման աշխատանքները իրականացվում են առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մնացած աշխատանքները՝ առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ,
Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)

Կ.Տ

<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծ. Իսակովի 22
Բանկ՝ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100
ՀՎՀՀ 01557589
Էլ. փոստ՝ info@toyota.am

Գլխավոր տնօրեն՝ Վ. Գզարյան

(ստորագրությունը)

Կ.Տ

Չափաբաժին թիվ 3՝ Տոյոտա Յարիս ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (1.3 GAS, 1 հատ)

Հ/հ	Ծառայությունների և աշխատանքների անվանումները	Ծառայության և աշխատանքի միավորի գինը, ՀՀ դրամ
1	2	3
1	Շարժիչի յուղի փոխարինում, շարժիչի տարողությունը 3.5 լիտր (7000 կմ-ը մեկ)	19,250
2	Շարժիչի յուղի զտիչի փոխարինում (7000 կմ-ը մեկ)	5,400
3	Առջևի արգելակման կոճղակի փոխարինում (15000-20000 կմ-ը մեկ)	39,000
4	Հետևի արգելակման կոճղակի փոխարինում (30000-35000 կմ-ը մեկ)	45,000
5	Օդի զտիչի փոխարինում (14000 կմ-ը մեկ)	8,000
6	Սրահի զտիչի փոխարինում (20000 կմ-ը մեկ)	15,000
7	Վառելիքի զտիչի փոխարինում (40000 կմ-ը մեկ)	77,000
8	Շարժիչի հովացման հեղուկի փոխարինում (120000-150000 կմ-ը մեկ)	40,000
9	Վառոցքի մոմերի փոխարինում, 4 հատ (70000-80000 կմ-ը մեկ)	11,000
10	ԱՖՏ-ի յուղի, զտիչի, միջադիրի փոխարինում (80000 կմ-ը մեկ)	77,000
11	Գեներատորի փոկի փոխարինում (80000-90000 կմ-ը մեկ)	30,000
12	Անվաբացքի կարգաբերման աշխատանքներ	13,000
13	Անվադողերի փոխարինման և հավասարակշռման աշխատանքներ	12,000
14	Ինժեկտորային համակարգի մաքրող հեղուկի փոխարինում (20000 կմ-ը մեկ)	7,000
15	Արգելակման հեղուկի փոխարինում (40000 կմ-ը մեկ)	24,000
16	Առջևի արգելակման սկավառակների փոխարինում (50000 կմ-ը մեկ)	95,000
17	Հետևի արգելակման թմբուկների փոխարինում (50000 կմ-ը մեկ)	147,000
18	Ապակեմաքրիչի 3 ռետինների փոխարինում	22,000
19	Ապակեմաքրիչի չսառչող հեղուկի փոխարինում, 1 լիտր	1,500
20	Կայունարարի վռանների փոխարինում, 2 հատ	19,000
21	Կայունարար կանգնակների փոխարինում, 2 հատ	71,000
22	Առջևի հարվածամեղմիչների փոխարինում, 2 հատ	110,000
23	Հետևի հարվածամեղմիչների փոխարինում, 2 հատ	96,000
24	Առջևի անվակունդի փոխարինում, 1 հատ	65,000
25	Հետևի անվակունդի փոխարինում, 1 հատ	136,000
26	Հարվածամեղմիչի թասակի փոխարինում, 1 հատ	50,000
27	Մարտկոցի փոխարինում	50,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1,285,150**

Ցանկացած մասի կամ հանգույցի համար Կատարողը Պատվիրատուին երաշխավորում է վերանորոգման դեպքում՝ առնվազն 3 ամիս, իսկ փոխարինման դեպքում՝ առնվազն 6 ամիս: Ծառայության արժեքի մեջ ներառված են փոխարինվող պահեստամասերի, նյութերի գները: Փոխարինվող պահեստամասերը և օգտագործվող նյութերը օգտագործված չեն և տրանսպորտային միջոցի արտադրողի կողմից արտոնագրված: Պատվիրատուն ցանկացած պահի իրավունք ունի Կատարողից պահանջել տեխնիկական սպասարկման ընթացքում օգտագործված նյութերի և պահեստամասերի որակի փաստաթղթերը:

Մեքենայի շարժիչի վերանորոգման աշխատանքները իրականացվում են առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մնացած աշխատանքները՝ առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>>
հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ,
Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)

Կ.Տ

<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծ. Իսակովի 22
Բանկ՝ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100
ՀՎՀՀ 01557589
Էլ. փոստ՝ info@toyota.am

Գլխավոր տնօրեն՝ Վ. Գզուարյան

(ստորագրությունը)

Կ.Տ

Չափաբաժին թիվ 4՝ Տոյոտա Հայասի ավտոմեքենայի վերանորոգման ծառայություններ (2.7 GAS, 2 հատ)

Հ/հ	Ծառայությունների և աշխատանքների անվանումները	Ծառայության և աշխատանքի միավորի գինը, ՀՀ դրամ
1	2	3
1	Շարժիչի յուղի փոխարինում, շարժիչի տարողությունը 5.6 լիտր (7000 կմ-ը մեկ)	30,800
2	Շարժիչի յուղի զտիչի փոխարինում (7000 կմ-ը մեկ)	5,400
3	Առջևի արգելակման կոճղակի փոխարինում (15000-20000 կմ-ը մեկ)	52,000
4	Հետևի արգելակման կոճղակի փոխարինում (30000-35000 կմ-ը մեկ)	55,000
5	Օդի զտիչի փոխարինում (14000 կմ-ը մեկ)	25,000
6	Սրահի զտիչի փոխարինում (20000 կմ-ը մեկ)	15,000
7	Վառելիքի զտիչի փոխարինում (40000 կմ-ը մեկ)	78,000
8	Շարժիչի հովացման հեղուկի փոխարինում (120000-150000 կմ-ը մեկ)	55,000
9	Վառոցքի մոմերի փոխարինում, 4 հատ (70000-80000 կմ-ը մեկ)	33,000
10	ԱՖՏ-ի յուղի փոխարինում (80000 կմ-ը մեկ)	40,000
11	Գեներատորի փոկի փոխարինում (80000-90000 կմ-ը մեկ)	59,000
12	Անվաբացքի կարգաբերման աշխատանքներ	15,000
13	Անվադողերի փոխարինման և հավասարակշռման աշխատանքներ	13,000
14	Ինժեկտորային համակարգի մաքրող հեղուկի փոխարինում (20000 կմ-ը մեկ)	7,000
15	Արգելակման հեղուկի փոխարինում (40000 կմ-ը մեկ)	34,000
16	Առջևի արգելակման սկավառակների փոխարինում (50000 կմ-ը մեկ)	105,000
17	Հետևի արգելակման թմբուկների փոխարինում (50000 կմ-ը մեկ)	175,000
18	Ապակեմաքրիչի 3 ռետինների փոխարինում	31,000
19	Ապակեմաքրիչի չսառչող հեղուկի փոխարինում, 1 լիտր	1,500
20	Կայունարարի վռանների փոխարինում, 2 հատ	21,000
21	Կայունարար կանգնակների փոխարինում, 2 հատ	67,000
22	Առջևի հարվածամեղմիչների փոխարինում, 2 հատ	116,000
23	Հետևի հարվածամեղմիչների փոխարինում, 2 հատ	108,000
24	Առջևի անվակունդի փոխարինում, 1 հատ	105,000
25	Հետևի անվակունդի փոխարինում, 1 հատ	145,000
26	Մարտկոցի փոխարինում	70,000
	ԸՆԴԱՄԵՆԸ	**1,461,700**

Ցանկացած մասի կամ հանգույցի համար Կատարողը Պատվիրատուին երաշխավորում է վերանորոգման դեպքում՝ առնվազն 3 ամիս, իսկ փոխարինման դեպքում՝ առնվազն 6 ամիս: Ծառայության արժեքի մեջ ներառված են փոխարինվող պահեստամասերի, նյութերի գները: Փոխարինվող պահեստամասերը և օգտագործվող նյութերը օգտագործված չեն և տրանսպորտային միջոցի արտադրողի կողմից արտոնագրված: Պատվիրատուն ցանկացած պահի իրավունք ունի Կատարողից պահանջել տեխնիկական սպասարկման ընթացքում օգտագործված նյութերի և պահեստամասերի որակի փաստաթղթերը:

Մեքենայի շարժիչի վերանորոգման աշխատանքները իրականացվում են առավելագույնը 5 աշխատանքային օրվա ընթացքում, իսկ մնացած աշխատանքները՝ առավելագույնը 2 աշխատանքային օրվա ընթացքում:

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծ. Իսակովի 22
Բանկ՝ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100
ՀՎՀՀ 01557589
Էլ. փոստ՝ info@toyota.am

Գլխավոր տնօրեն՝ Վ. Գզարյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված թիվ 2
<<17>>_____12_____20_19_թ. կնքված
<<ՄԱԾՁԲ-2020/3-ԵՊԲՀ-1>> ծածկագրով պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
			... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %	... %

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով: Եթե պայմանագիրը կնքվում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա, ապա սույն ժամանակացույցը լրացվում և կնքվում է ֆինանսական միջոցներ նախատեսվելու դեպքում կողմերի միջև կնքվող համաձայնագրի հետ միաժամանակ՝ որպես դրա անբաժանելի մաս:*

*** Պայմանագրում գումարները նշվում են տոկոսով, իսկ համաձայնագիրը կնքելիս տոկոսի փոխարեն նշվում է կոնկրետ գումարի չափ:*

<<ՊԱՎԻՐԱՏՈՒ>>
<<Երևանի Մխիթար Հերացու անվան պետական բժշկական համալսարան>> հիմնադրամ
Հասցե՝ ք. Երևան, 0025, Կորյունի 2
Բանկ՝ <<Հայբիզնեսբանկ>> ՓԲԸ, Տերյան մ/ճ
Հ/Հ 11500166513800
ՀՎՀՀ 01503448

Ռեկտոր՝ Ա. Ա. Մուրադյան

(ստորագրությունը)
Կ.Տ

<<ԿԱՏԱՐՈՂ>>
<<ՏՈՅՈՏԱ ԵՐԵՎԱՆ>> ՍՊԸ
Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ծ. Իսակովի 22
Բանկ՝ <<Ամերիաբանկ>> ՓԲԸ
Հ/Հ 15700-03667300100
ՀՎՀՀ 01557589
Էլ. փոստ՝ info@toyota.am

Գլխավոր տնօրեն Վ. Գզարյան

(ստորագրությունը)
Կ.Տ

Հավելված 3
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝
_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված 3.1
« » 20 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն